

## ՀՀ Վայոց ձորի մարզպետը մասնակցել է հաշմանդամություն ունեցող անձանց

### խնդիրներին նվիրված քննարկմանը

15.04.2015



2015 թվականի ապրիլի 14-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը մասնակցել է է հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներին նվիրված քննարկմանը, որը տեղի է ունեցել Վայոց ձորի մարզային երիտասարդական կենտրոնում: Քննարկմանը մասնակցում էին մարզպետի տեղակալներ Սամվել Թարվերդյանը, Մելս Հարությունյանը, խորհրդական Վասիլ Ասլանյանը, մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ և աշխատակիցներ, հաշմանդամներ, ՀԿ ներկայացուցիչներ:

Միջոցառում կազմակերպել էին հաշմանդամների աջակցության „ՈՂՋԻ“, ՀԿ-ն, նախագահ Կամո Դավթյան և „Սոցիալ հոգեբանական հետազոտությունների և վիճակագրության կենտրոն“, ՀԿ-ն, նախագահ` Խնկանուշ Մարկոսյան:

Միջոցառման սկզբում ցուցադրվեց խուլ երեխայի խոսելու ունակության զարգացման մասին ֆիմ, այնուհետ կազմակերպվեց քննարկում: Ելույթ ունեցավ Կամո Դավթյանը, ով ներկայացրեց հաշմանդամ դառնալուց հետոակտիվ կյանքով ապրելու իր ձգտման և իրականացնելու համար իր ներդրած ջանքերի մասին, որոնց շնորհիվ նա առանց ձեռքերի դաստակների դարձել է սեղանի թենիսի հանրապետական և միջազգային մրցումների հաղթող: Ստեղծել է հասարակական կազմակերպություն և զբաղվել հաշմանդամների իրավունքների պաշտպանությամբ:

Մարզպետն իր խոսքում ողջունեց հասարակական գործունեությամբ և թենիսային սպորտով զբաղվող Կամո Դավթյանին, գովեստով ներկայացրեց Կամոյի օրինակելի վարքագիծը: Հարություն Սարգսյանը մարզային իշխանությունների կողմից համագործակցության պատրաստակամություն հայտնեց, հաշմանդամներին մարզային հասարակական կյանքում ներգրավելու նպատակով: